

» 1892 «

# ԲԱԶՄԱՎԵՊ

## ՀԱՆԴԻՇԱԾՐԱՆ

ՀԱՅՈՐ Դ

ՄԱՅԻՍ

### ՎԵՆԵՑՅԱՆ

թ.

(ՏԵՂ 145)



ՅԱ յիշատակաց մէջ առաջին և պանծալի գրելու է Հայերէն ապագրութեան սկզբնաւորութիւնն ի վենետիկ, որոյ փրայօք շատ անգամ գրուած է, և դեռ նոր և առուգագոյն ծանօթութեամբը՝ Բաղմանէպ օրագրիս անցեալ (1890) տարուան սկիզբները (երես 99—104). որ՝ որչափ որ հաւանական և գրեթէ անսարակոյս կ'երեւէր յիշեալ գրոց (Ախտարաց, Հերիմարանի, և այլն) շատ տարի յառաջ քան. զԱրգարու արպագրեալ Սաղմոնը՝ տպագրուիլն ի վենետիկ, բայց յայտնի վկայութիւն մի չկար. և ահա գտաւ և յայտնեց մեղի զայս մեծայարդ և բանաէր անձ մի Սահակ եպիսկոպոս Գապայեան միաբան Երուաղէմի Ս. Յակոբեանց վանաց, որու երախտապարտ և շնորհակալ կ'ըլլամբ այս տեղ. գտած գրբցին է Խորհրդատետր մի, այս համառու յիշատակարանաւ. « Տպագրեցաւ սուրբ » տառ ի ԶՀԲ (1523—4) ի աստուածապահ քաղաքս ի վեճեժ, որ է « վեճետիկ, Ֆռանկաստեան. ձեռամբ մեղապարտ Յակոբին. որը կարգայր « մեղաց թողութիւն խնդրեցէք Աստուծոյ» : Քաղաքն յայտնուեցաւ, բայց տպագրաստունն դեռ ոչ. կրնար կարծուիլ որ նոյն իսկ Հայոց տան մէջ ըլլայ, ինչպէս ուրիշ տպագրեալ կին զիբք մի կ'ըսէ : Այս Հայ տպագրութեան կարեւոր խնդրայն ծանօթութեան մեծ լրց մ'է, բայց դեռ ոչ բաւական. կը մնայ փափագելի գտնել այս մեղապարտ Յակոբէն առաջ բարեպարտ և բա-

թերազդ Հայ տպագրող, մի կամ թէ նոյն իսկ Յակոբն է՝ իր առաջին տպագրածը, և ի՞նչ կերպով հնարելը հայերէն տառերը, ինչպէս որ իրմէ 40 և աւելի տարի վերջ (1566) երբեմն առաջին տպագիր կարծուող Աբգարն Թօփսաթեցի՝ իր ըրածը կը պատմէ, միանգամայն և յայտնելով կամ կոշելով Նոր իր տպագրութիւնը, ուսկից հարկ էր գոշակել որ իրմէ առաջ ալ կամ հնագոյն հայ տպագրութիւն կար: Այս բանին վկայութիւն մ'ալ ըլլայ (որ չէ յիշուած Բաղմալիպի կամ ուրիշ տեղ ժանուուածներուն մէջ), Լորինցոյ ա՛լնանիա հեղինակի մի Տիեզերագրութեան (Cosmografia) գրոց մէջ յիշածը, թէ ինքն աջօք տեսեր է յամին 1562 Վենետիկէն բերուած հայերէն տպագիր մի, որ ըսածէն կ'երեւի թէ ըլլայ կամ այրբենարան կամ քերական<sup>(4)</sup>: Դիտելի է և յիշածն թէ Հայոց այրուբենը 29 են, միայն բաղադայնները համբելով և ոչ զձայնաւորս, և ոչ 0 և ֆ տառերը:

Ալբարու տպագրութենէն 20 կամ 22 աարի վերջը (1587) նոր տպագրութեան ձեռք զարկեր է ի վենետիկ, և նոր տառերով, աշխարհիկ երեց մի, Տիրզեցի Տէր Յովհաննես, և տպագրեր է Սաղմոս մի ի տպագրատան Յովհ: Ալբերտի (Alberti), իր և իր գործակից Խաչատուր որդույն պատկերքն ալ փորագրել տալով և վրան գրելով: Տէր Յովհաննէս Տիրզեցի եւ Խաչատուրն ծառայք Կատուծոյ և յիշողաց: Ուլիս: Իրեն օգնական և ձեռնաւուեղեր են իր հոգեւոր որդին, Ստեփանոս, և այլ Չոռշայեցի վաճառականք, որոց զիխաւորը կ'անուանէ Շահօլի, այլ աւելի երախտաւոր «զկարապետ Բա» դիշեցին (Վ'ըսէ) յիշեցէք ի Փրիսասոս, որ բազում օգնութիւն հասոյց մեղ»: Անոն և կիսատ (թուի գրոց օրինակին պակասութեամբ) ոսանաւոր մ'ալ կ'իմացընէ զիխաւն եկած փորձանիները, և ամբաստանուելով (ի՞նչ բանի համար) ի բանտ ձգուիլը, միանգամայն և ի Հառմ զացած ըլլալը, ինչպէս յետոյ և ի Մարտիլիս: Այս քիչ շատ յիշատակարաններէն կ'իմացուի իր բաւական բաներայի այլ և բանագտակ և լեզուադէս ըլլալն: Ահա գրածն.

« Այս է տաղ և յիշատակարան ի վերայ անսւան: Տամ ես զերես՝ ձեր ոտաց կոխան, ունկն զնել այսուիկ բանին, Որ ես պասմեմ փոքր մի զանցս իմ զեղեալս իմ ի գոյն տաղի: Շոր որ եղէ այրի գերիս ի Համիթ մայրաքաղաքին: »

Մնաց երկու աղջկունք և տղայ մի եօթն ամի: Ճամանակ ատեցեալն<sup>(5)</sup> տարակուսիլ ետ իմ անձին: Եհան զիս յիմ որբերացն, ած ի Հառմ յերկիրն լատին: Շորժամ կամեցայ յետ զառնալ, զի վերջ արի զիմ առաջին<sup>(6)</sup> Քսան աւուր ճանապարհ չորս միամիտ յիմ ճանապարհին, Շոր վկայ է Տէր Աստուած՝ որ ծածկատես ամէն զազտնին:

1. Il cui alfabeto costa, siccome io ho veduto, con una breve *metodo* del loro idioma, di 29 lettere, di che già ne hanno la *stampa*, havendo la riportata da Venetia l'anno del sessantidue.

Զի վաս ինչ ոչ գործեցի՝ զի արժանի լինի բանախն.  
Ասն իմ մեղացն որ յառաջ կայր՝ որ ինչ գործեալ յիմ երկրին,  
Փութանակի աստի հասան մի ըստ միով կա....  
Արդ երբոր այն պատահեցաւ լեցին (?)

Ի Հռոմայ թուղտ առաքեցին ի քաղաքին... ասեն...

Նոյն տպագրութեան տարին (1587-8) ի Վենետիկ գալէն առաջ կամ (հաւանօրէն) վերջը, Տերզնցին իր որդոց ի Մարտիլիա զնացեր է, և հօն փունկաց անուանի հին վիպասանութիւն Գեղեցիկն Փարիզու, Le (Che-

Յիշազմ է որ յոր ժամ զաս արքայն  
և թամբ քո և ողորմեամ էզ.



Յիշատակարանէ աւելի  
առ քամէնանր երյսէ ճէ հօրեւ

(Տես յերես 194)

valier Paris et la belle Vienne) թարգմաներ է հայերէն տառանաւոր չափով. որ եթէ ուրիշ լմուազիսի օնութեամբ ալ եղած ըլլայ, զարձեալ արդինաւոր է Յովհաննէս, մանաւանդ եթէ նկատուի այն վիպասանութեան հին փունկ լեզուն և ոճը: Թարգմանութեան վերջը նոյնպէս ոստանաւոր յիշատակ մ'ալ գրած է, որոյ առղից առաջին տառեն կը կազմեն այս բանս. « Չտեր Յովհաննէսի Տերզնցոյ ասաց յուա », փօխանակ ասացեալ կապելու. դրան թէպէտ զմեզ ի Վենետիկոյ գործ կը հանէ, բայց իր այս աեղ ըրած վիպաւոր գործն (տպագրութիւնն) ներելի ընէ, զնոյն օրինակել և կարդալ, որովհետեւ շատ սակաւազիստ ալ է գիրքն. « Յիշատակ թարգմանչի տառիս.

Զարիսք պինս լի երես որ կայ  
Տրորեալ մածիմ ոտացզ վերայ .  
Եղբայր , լեզուով մի յիս գըթայ ,  
Բամեալ հոգուս ողորմի տայ .  
Յորդ արտասուզ գոշեմ ահա ,  
Ողորմեցէք որպէս Յովբայ :  
Վկայն իմ Տէրն է , կրկին վկայ .  
Աղաղակեմ , ձայնըս կու գոյ .  
Նա որ ասէ մի Տէր ողորմեա  
Եղկելոյն այն որ կու կենայ ,  
Ի յաղենին առնու և խնոայ :  
Տրամադրեալ աս ի Ֆրանցայ  
Եր ի քաղաքն Մառչիլիայ .  
Բամել թուիս մերոյս Հայկայ  
Զերդ և հազար և երեսուն կայ ,  
Նայ աւելի եւս վեցաւեայ ,  
Ցվերջ ամսուն յամաց սոցայ .  
Որ և երկրիս այս մեծ արքայ  
Ցինրիքոս կոչեն ըզնա :  
Այլ ես յորդովք քաղաքս ուղղայ .  
Սիրսոս իմ կամի որ միշտ երթայ .  
Այլ ճանապարհու երկրի սորայ՝  
Ցամաքն և ծովս կապեալ մնայ :  
Յաւտարութիւնըս մաշեցայ ,  
Որ ի երկիրըն Ֆրանցայ .  
Այս ի՞նչ ցաւ է , կայ և մնայ :  
Կատարեցաւ բանս » :

Անցողաբար յիշեմք որ Տէրպնցին ի Հոռվմ եղած ատեն (1583) , Հայոց վերակացու կամ իշխան անտանեալ Սուլզանշահի (Աբգար ապագին որպոյն) և ուրիշ զիխաւորաց կողմանէ՝ երկայն նամակ մի զրած է , արձակ և ոտանաւոր (իր օճով) առ Դասիթ պատրիարք Երուսաղեմի , հրաւիրելով որ գայ ընծաներով 'ի Հոռվմ , և տեսնէ Գրիգոր ԺԴ Պապուն ըրածները , մանաւանդ Նոր տօմարի հաստատութիւնը , զոր և յաշորդ տարին (1584) թարգմանեց ինքն Տէրպնցին և տպագրեց ի Հոռվմ :

Փ . Տպագրութիւնն ի հարիէ կը պահանջէր նախընթաց որ և է զրագիտութիւն մի կամ զրաւոր ճաշակ . այս ճաշակին գործին՝ որ է լեզուն , կըրնայ յատովկ ըստով կամ դիւրագիւտ Հայոց . ամէն ատեն ծանուցուած է մերայոց յաջողութիւնն օտար լեզուներ տոլրելու , խօսելու և թարգմանելու , նախ բանիւ ապա և զրով : Ոտուբինեանց տէրութեան ատեն վայելապէս

ծաղկած էր լեզուագիտութիւնն ալ թարգմանութիւնն ալ . թողլով զընդհանրութիւնն և գալով ի մասնաւորն՝ յիսալականն , և առանձինն ի վերաբերեալն ընդ վենետաց , տեսանք արդէն ժ՞ի դարուն կիսէն առաջ Աւագ կարաւանապետին թարգմանի գործ կասարելն ալ երրեմն ի վենետարիկ եկած առեն (Բազր. ԽԸ. 4օֆ 3.) , և իր ծառայութեան վարձը խնդրելը : — Գրեթէ 200 տարի վերջը (1519) Դամակացի մ'ալ նոյնպէս կու զայ ի վենետիկ իր թարգմանորէն ծառայութեան վարձը հաստատել տալու : Գիտնալու է՝ որ վենետաց մեծ առուստը ունէին յԱսորիս , ուր իրենց զիսաւոր գործատեղին և պաշտօնեայն որ գումա (comsole) Կ'անուանէին կը նատէր ի հին մեծ և բարգաւաճ քաղաքն Քամակոս , ուստի յետոյ փոխազբեցաւ ի թերիա (Հալէպ) . յայտնի է որ այդ քաղաքաց բնակչաց հասարակ լեզուն արաբերէնն էր , տեղացի Հայք ալ իրենց լեզուն զատ խօսէին զայս և ըզթուրքարէն . ուստի թէ վենետաց և թէ որիշ արեւմնեայց կը ընային ըլլալ և կ'ըլլային թարգմանք . Ասորոց երկրին և վենետիկոյ փոխազբձ վաճառաց տարութերի համար՝ բանուկ մաքսատուն կամ բաժտուն մի հաստատուած էր այդ մեծ քաղաքին մէջ , առնուած բաժն վենետաք կորդիմոյ (Cottimo) Կ'անուանէին , և դողոված բաժն ու հաշիւն անվրէպ կը խարէին ի վենետիկ . այս բաժտան թարգման էր Գեորգ տեղացի Հայն . ԺԵ դարուն վերջի տարիներէն սկսեալ , կ'ընդունէր տարեկան վարձը 246 դուկատ , որ ըստ նիւթական արժէից 500 ֆրանգէն աւելի է , ըստ իրականին՝ այժմեան արժէից՝ թերեւս երկաստիկ աւելի : Խնչպէս վաճառականութիւնն՝ այսպէս անոր վերաբերեալ ամենայն հաշիւք ալ փոխական են , աւելի կամ նուազ . 1518ին առեւտառին շատ յաջող չլլաւով՝ Դամասկեան բաժից մեծ պաշտօնեայցն ի վենետիկ՝ ուզեցին . իրենց բաժտան ծառայուղներն ալ անոնց վարձն ալ նուազեցընել , և պիսաւոր թարգմանին աալ՝ 150 դուկատ միայն : Գեորգ լաւ զիսնալով իր արժէքն՝ վաճառութեամբ եկառ ի վենետիկ , և խնդրեց տէրութենէ՝ որ քննեն իր 20 տարի ըրած հաւատարիմ ծառայութիւնը և առաջարկ կը նայած կ'ընետիկ ալ զի զրկեն զինքը իր թոշակէն : Վենետաք կամ տէրութիւնն շատ խիստ էր այսպիսի խնդրոց և վարձատուութեանց մէջ . քննել տուաւ Գեորգաց ըրած շրածը . Դամասկոսէ ելած եկած գունքը միաբերան վկայեցին , որ ոչ միայն թարգմանութեամբ այլ և շատ ուրիշ գործերով օգուակար եղեր էր Գեորգ իրենց և տէրութեանն . Երբակոյտն ալ հաւանութեամբ վճռեց (Յ մայիսի , 1519) որ կենօք շափ արուի Գեորգաց 200 դուկատ տարեկան , և զարձեալ ուրախութեամբ ծառայէ Հասարակապետութեան :

Այնպէս ալ կ'ընէ Գեորգ զեռ շատ առարիներ . և երբ կը վախճանի 1536-7 թուին , Դամասկոսի գունցն և խորհրդականք թարգման կ'ընտրեն իր որդին Մարկոս , որ մականուամբ Ֆատալլահ կոյուէր . թոշակ աալով 50 դուկատ , 50 դուկատ ալ իր հօրը առնելիքներուն համար . Վենետիկոյ պաշտօնեայք ալ կը հաստատեն զայս (ի 4 մարտի , 1541) ի շնորհս իր հօր « հաւատար » մութեան , ժրութեան , լաւութեան և յաջողակութեան » (attenta la fe-

de, solertia, bontà et sufficientia del quondam Turzimano del nostro Cottimo, et li meriti suoi, *et aijūn*: *Երկու տարի վերջը* (17 օգոս. 1543) ոչ միայն հօրը գովեստը կը կրկնեն պաշտօնեայք հասարակագետութեան՝ այլ և *Մարկոսի* թէ լեզուագիտութեան համար (արար, թուրք, փուանկ), և թէ մանաւանդ իր գործօնութեան, ոչ միայն ի Դամասկոս այլ և ի Դամասկահա, ուր ղրկած էին. կը վճռեն որ տրուի իրեն ալ ինչ որ հօրը կը արուէր, այսինքն 200 զուկաս տարեկան, այս պայմանաւ որ միայն *Մարկոս* ըլլայ թարգման ի Դամասկոս, և ուրիշի բան չի տըրուի: — *Մարկոսի* լեզուագիտական յաջողութեան պանծալի յիշատակ մ'ալ կայ ի վենեատիկ, այլ և ի բժշկական գրագիտութեան, վերոյիշեալ թուականին մօս տարիներ. երբ այս քաղցիս մէջ մեծ անուն Նիկոլոս *Մասսա* բժիշկն, թէ վարպետութեամբ և թէ հեղինակութեամբ, ուզեց տըրպագրել արդէն ի լատին լեզու թարգմանուած արարացի գերահոչակ էսպու Մինայի գրութերը, (զոր Եւրոպացիք Աչէննենա կ'անուանեն, մեր հին ազգային բժշկապետն Մինիթար Հերացի և այլք Սինայի որդի) ուզեց նաև աւելցընել անոր վարցն ալ, զոր գրած էր անոր աշակերտն (Զօրպան? Էլ Կիւզկանի): և ահա այս ետքի գրուածին թարգման գտաւ մեր *Մարկոսը*, որուն բառ առ բառ խոալերէն թարգմանել տալով ինքն դարձուց ի լատին, և յետոյ տպագրել տալով յամի 1544, ընծայեց առ Սուրբն կարողս հրոշակաւոր արքեպիսկոպոսն Միլանու: *Մասսա* իր գրոց յառաջարանին մէջ կը վեայէ զայս: Վիւսագէնթէլտ գերմանացին որ Արարացի բժշկաց պատմութիւն գրած է նաեւ թարգմանութեանց, չէր կըրնար վենետիկոյ Դիւանաց ծանօթութիւն ունենալ, անոր համար կարծեօք կ'ըսէ թէ գուցէ ֆասլալահն ալ բուն արարացի եղած ըլլայ և յետոյ քրիստոնեայ ըլլալով՝ *Մարկոս* անունն առած:

Վենետիկ այնքան ընդարձակ և զանազան տեղեր յարեւելս առուստուր ունենալով՝ ի հարկէ և թարգմանաց կարօտ էին, թերեւս ոչ այնքան այն օտարերկիրներու և կղզիներու մէջ, որքան բուն իրենց մայրաբաղարին, որ կենդրոն կամ ժողովարան էր ամենայն ազգէ վաճառականաց. ի զիւանս յիշեալ կամ հանդիպեալ թարգմանաց հնապոյնք են մեր վերայիշեալ Դամասկոսից. անոնցմէ վերջ նոյն (ԺԶ) զարու մէջ կը յիշուին քանի մի Յոյնք կղզեցիք և կիւզրացիք, որպիսի էր Նորէս Յակոբ (1587–1620) հմատ արար, թուրք և պարսկի լեզուաց, անկէ առաջ Միլայէլ *Մամբրէ*, և այլք. յաջորդ զարուն (ԺԷ) մէջ կը յիշուին և հայուէտ խտալացիք, ինչպէս Ֆըրանչիկոս Սկարամելլի (Secaramelli, 1630), Ֆորդիս և Պովիս ի կէս զարուն, այլ և Հայք, Գեղորգ որդի Յակոբայ որ և սէնսար էր (1634), *Մարտիրոս Լորենցոյ* որդի Պետրոսի (1630–40), Պոլոս (1652), նոյն

1. Cum invenissem Marcum Fadellam damascenum, Venetorum mercatorum Interpretem, atque operam dedissem, ut is verba Sorsani vulgari Sermone exponeret, latinis ea mandare decrevi.

ժամանակ և մէկ Մկրտիչ Ռիհոզա որ Հայ է թէ խոսլացի՝ յայտնի չէ ինձ :

ԺԱ. Այս ասեն և վերջը Հայք աւելի բազմացեալ և հաստատ բնակելով ի Վենետիկ՝ այնքան կարօտութիւն չկար թարգմանչաց, ոչ իրենց համար և ոչ պետութեանն, և ոչ ալ մեծ յարդ մի լեզուա թարգմանութեան որպէս զրով : Այս եաբի մասամբ՝ Մարկոսի պէս և աւելի ալ նշանաւոր եղած է մերազգին Խաչատուր Դաշրիճեցի, պարսիկ լեզուէ լու խոալերէն թարգմանելով հետաքրքրական զրոյի մի, որ է վիպասանութիւն մի Պանդիմասութեան կամ ուղեւորութեան Եերեսպիպացի<sup>(1)</sup> կղզւյն թագաւորին երեք որդոց. Վերնազիրն է, Peregrinaggio di tre giovani figliuoli del Re di Serendippo: Per opera di M. Christoforo Armeno, dalla persiana nell'italiana lingua rapportato. Նախ ապազուած է յամի 1557, յետոյ այլ եղած այլ անգամ. մեր ձեռքը գտուածն է 1584ի տպագրութիւնն, ի Վենետիկ, փոքրիկ ութածալ, 83 թուղթ : ինչ պատճառաւ թարգմանուած և տպագրուած ըլլալը՝ լսենք Խաչատորյ արեւելեան ոնով յառաջարանէն, իր խոալերէնէն թարգմանելով ի հայ. «Միշտ գոլութիւն Տեղա» ուն Աստուծոյ, օսենզուողին եօթն երկնից և չօրս ապրերաց, և այլ ա» մեն իրաց որ կ'երեւէին ի վերայ երկրի, և արարչին մարդոյ՝ որ վերազանց » է քան զամենայն կենդանիս. օրուն ոչ միայն միար ընծայեց՝ իր աստուծութիւնը ճանչնալու, այլ և լեզու՝ իրակ ընդունած բարեաց շնորհակալ ըլլալու : Ես իսեղմ մերաւոր Խաչատուր (Christoforo) Հայ, իմ երկիրը բարեւէծ քաղքին մէջ գտուած ասենս՝ շատ անգամ շատերէն կը լւացի որ ֆառանկաց կողմերը շատ ազնուական և մեծահանճար մարդիկ կան, զոր և զիւրին էր հասկընալ անոնց քոյլ գտուած կեղեցիկ և զարմանալի բաներէն : Ասկէ մեծ փափառ մտա ի սիրոս՝ այդ երկիրը տեսնելու, մասնաւանդ որ քրիստոնէից իշխանութեան ններեւ էր, ուր Քրիստոսի կրօնից ծէսերը և իշխանաց սովորութիւնները կը բնայի ճանչնալ, ես ալ քրիստոնեաց մեր մեջ մամբայ եւնելով ի փոանկաստան երթալու, իմ առաջէն հանդիպած աեղն եղաւ վենետիկ. որ օրովհետեւ բոլոր աշխարհիս մէջ իր նմանը չտնի, կը բնայ ըսուիկ թէ Աստուծոյ և ոչ ուրիշի ձեռօք նախ շինուած ըլլայ : Ծովու մէջ զետեղուած է, և թէ ջրով թէ ցամաքով՝ մարդ ամէն կողմը կը բնայ երթալ գալ. վասն զի միշտ կը գտուին տեսակ մի ծածկ կուած նաւակը՝ կոնսորչ ըսուած, որ ուր որ մարդ ուզէ՝ կը տանին : Պալատաց և տանց մեծ մասն երկու գառ ունի, մէկն ջըրի վրայ է, ուսկից ամէն մարդ ուզածին պէս կ'ելնէ կը մանէ : Այս քաղքիս մէջ ուրիշ կենալանի շերեւնար, բայց միայն մարդիկ և կեղեցիկ ու վայելահանա-

\*. Բայ ումանց Առւանաբա կղզե, կամ ուրիշ մեծ կղզե յՈվկիանոս Հնդկաց :

» սակ կանայք. մինչդեռ մեր քաղաքաց մէջ էշերն և ուղտերն անդապար  
» անցնելով՝ անտանելի նեղութիւն կու տան մեզի: Ճամբաներն ամենամա-  
» քուր և աղիւսայատակ են. շատ և մեծաշէն պալատք և եկեղեցիք կ'ե-  
» րեւան. կան և շատ հոգետունք (կամ հիւանդանոցք, hospitali), ուր արք  
» և կանայք առանձին կը բնակին, և շատ լաւ ժամայողներ ունին. ճեր-  
» մափեղէն զգեստնին շատ մաքուր. բժշկնին միշտ կը հոգան զանոնք, և  
» անոնց ամէն պէտքը կը արտուի: Այս տեղ ճիշտ արդարութիւն կ'ըլլայ,  
» ամենենեւին չի թողուիր որ մէկն ուրիշի անիրաւութիւն ընէ. ամէն մարդ կը  
» ջանայ կրցածին չափ կտուծոց պատուիրանքները պահել. օրինօց կ'ապրին.  
» և պաշտօնեայց արդարութեան ամենքն ալ շատ զիտուն և շատ բարեսէր  
» անձինք են: Այսոնցմէ զատ կան նաև շատ սենեակներ՝ ուր աղքատ օտարա-  
» կանք, առանց վարձք տալու կը բնակին, այս բանիս կըրնամ՝ ես համարձակ  
» վկայել, որ երեք տարի է իմ վիճակիս պատշաճ սենեկի մի մէջ բնակած  
» եմ առանց բան մի վճարելու. չեմ յիշեր թէ հանդիպած ըլլամ որիշ  
» քաղքի մի՛ որ ասկէ աւելի ողորմած և պղքատաց կարեկից ըլլայ: — Արդ  
» ես այսպիսի գեղեցիկ բարուց և սափորավեեանց սիրահարուած, իմ հայ-  
» բենքը բոլորուն մառալոյլ եթէ և երբեմն ի միտրք ընկնայ նորէն դառնալ,  
» կարծես թէ բաղձանքը մոռցընել կու տայ զայն: Այս տեղ ամէն արուեստի  
» պարապող մարդիկ շատ մնադիր տեսնելոյլ իրենց բանին գործին, այս  
» քաղքիս մէջ իրենց ինծի ըրած շատ և շատ մարդավարութեանց փխաւ-  
» րէն, իրենց զուարծութեան համար ուզեցի իմ մէկ սիրելի բարեկամիս  
» օգնութեամբ իմ լեզուս յիտալական լեզու թարգմանել Պանդիստութիւն  
» մի երեք երիտասարդ օրդուց Մերենպիպոյի թագաւորին. որ բառ իմ կար-  
» ծեացս իր գեղեցկութեանն համար ընթերցողաց շատ հաճոյ պիտի ըլլայ,  
» որով կը յուսամ իրենց շնորհակալութեան արժանի ըլլալ: — Խաչատուր  
այս յառաջաբանէն զատ նամակ մ'ալ զրած է առ ազնուականն Մարդկ —  
Անսոն ձիւստինանց, անոր ընծայելոյլ գիրքը, մէկ մի՛ անոր իրեն ըրած  
շատ բարերարութեանց համար, մէկ մ'ալ ուզելոյլ անոր մեծ և պատկա-  
ռելի անուամբ բամբասողաց կամ շնաւանողաց բերանը գոցել, ինչպէս որ  
մեր ազգին մէջ ալ կը գտուին, կ'ըսէ. ասկէ զատ ամառուան տաք օրերուն  
մէջ զրաղելու յարմար տաիթ մի համարեր է այս զրաւոր աշխատութիւնը.  
նամակն ալ զրած է օգոստոսի առաջին օրը (1557): — Որչափ սր աւելորդ  
կը համարիմ այդ վիպասանութեան (եօթն պասմութեանց) վրա խօսիլ, ի զո-  
վեսո հիղնակին և խաչարոյ, (թերեւա երկուքն ալ մի են), պէտք է ըսել՝  
որ նախ իտալական լեզուին յատակութիւնն գոլուած է, և 7 կամ 8 անգամ  
տպագրուած. (աղէկ բարեկամ գտած և ընտրած է խաչատուր. ապրի՛.) երկ-  
րորդ, զրուածն ալ կամ արեւելեան ճաշակին համար կամ վայելուշ ոնյն  
համար՝ թարգմանուեր է ի փունկերէն, անզիերէն, գերմաներէն, հոլան-  
դերէն և գանիերէն. հիմայ բաւական հազուազիս և թանկագին են ասոնք.  
և այս ամենուն արգիւնքն վերաբերի առ խեղառոկ մեղացոյ Հայ խաչա-

տուրն այն, որոյ նման Հայ մ'ալ գունելու համար, որոյ զբաւոր գործն այսքան լեզուներ թարգմանուած և տպագրուած ըլլայ, թերեւս հարկ է մեր ժկ դարու կոռիկոսի տէր Հեթում Պատմին մօս երթալ:

ԺԲ. Միայն Դաւրիժեցի խաչասուրն չէ որ Վենետիկյ վրայ զմայլած և գրած ըլլայ. ուրիշ Խաչատուր երեց մ'ալ կայ, աւելի հեռու աեղոյ մի մականուամբ, իրովացի. ծննդեամբ թէ ուրիշ պատճառաւ այսպէս կոշտած, չեմ զիտեր: Աս աւելի երկար և մանր և սուր զիտողութիւն և ոտանաւոր բանիւ զրած է իր «Յարմարեալ Պատմութիւն Վանատիկոյ փոքր ո ի շատէ. ականատես և ոչ ականջալոր լեալ». զոր և արդէն 44 տարի առաջ հրատարակած եմք ի բազմավէպ օրագրի (Ե, 172-77). և կրկնել այն իբր 280 երկայն առողերը՝ ծանր է, թէ և ոչ անսարժան զրուած է, մանաւանդ անծանօթի մի, նաև բնիկ վենետ բանասիրի, ինչպէս որ փափած են այսպիսից ալ. մեր առջի անգամ հրատարակած ատեն, ինչպէս որ յայտնած ալ եմք, օրինակին մէջ 20 տողի շափ պակաս կար. ուրիշ օրինակ մ'ալ ունեցանք յետոյ անպակաս քիչ մ'աւելի նոր զրուած 165 6ին, բայց ոչ ասկէ և ոչ առջինէն որոշ չխմացուիր հեղինակին ժամանակը, որ իր գրութեան ամսուն օրը նշանակելով՝ տարին մոռցեր է: Կ'երեւի թէ Դաւրիժեցիէն քիչ ետք ըլլայ. և քան զնա աւելի անշատ զիտող և զրող սարուագրած բաները ճիշդ են, բաց ի վենետիկյ 10,000 կամուրջներէն, և անոր ծագման կամ շինութեան սկզբնաւորութեան աւանդութենէ, իբր թէ Հնդկաստանէ եկողէ մի, կամ այն աշխարհին թագաւորաց փախրստեայ գանձերով շինուած ըլլայն: Քաղաքին նեղաւածը ըլլալը՝ յրի մէջ ամփակելով, և ընկարծակելու համար՝ կամ ծանծաղ տեղուանք ցիցեր տնկելով և անոնց վրայ շենք շինելը, կամ տուներու վրայէ վրայ յարկեր բարձրացընելլ՝ լաւ կը ստորագրէ, ըսելով.

«Պաղ և պաղչայ յաւել շունին, և զոր ունին՝ տան մէջն է նայ.

Հանց գեղեցիկ են զարդարեր, նման զբախտին ծաղկեր է նայ.

Մէջ քաղաքին կովիթիթ յանին, և զոր ունին՝ զիւղօրէցն է.

Գրասուո գերեսոն շեն տեսնուոր. տեսողացըն մէջ զարմանք է:

Նեղուց քաղաք և մարզին շատ. տունն ի վերայ տան շինեալ է.

Հինգ և վեց զաթ տուն են շիներ, ներքինըն զվերինըն չի զիտէ.

Ցան հազար կարմունճ ունի, ի քաղաքին մէջ երթեւեկն է.

Լանուց մէկ տեղ մի հէշ շըկայ. ներքեւն խանութ վըրան տուն է:

Մըովէն բացուած ցածուն տեղուանք քարով խիճով բարձրացընեն,

Քսան երտուն տարի զատին, հազիւ տեղ մի ցամփեցընեն:

Սան Մարգոյին մալլն շատ է, խարճեն և սարայներ շինեն:

Կամ կու ծախին, կամ վարձու տան, հրասավով զդրամն աւելցընեն.

Քանի մի մեծ տոլապ շինած՝ ծովուն զատակըն կու քերեն,

Ցանին ի յայն տեղըն լընուն՝ յոր աեղ որ սարայ կու շինեն»:

Խաշատուր՝ թէ այս լեզուով զրուածէն, թուզք բառեր խառնելով, և թէ հետևեալ տողերով,

« Զերկրին հողըն կլուն շինեն , մարգարտի պէս ծախեն զնայ , Զթուրքաց երկրի զմարդըն խարեն , մէկ մ'ալ ես որ խիստ խարեցայ » , կը յայտնէ իր թուրքիոյ կամ արեւմտեան Հայոց կողմերէն լյլալը . ամենեւ փն չի յիշեր ազգայնոց ի Վենետիկ գոնուիլ կամ անոնց տունն և եկեղեւ ցին , միայն ի յիշելն Ս . Մարգոս մայր եկեղեցւոյ հարսառաթիւնը՝ կ'ըսէ .

« Այլասեռից վաճառականք ի տեսութիւն մտնեն ի նայ ,

Զոլլինին շարժեն նորա , շատ որ գաւանդըն մոռանայ » .  
այդ այլասեռ վաճառականաց մէջ անշուշտ կ'իմացընէ և զչայս . իսկ զաւանդի մոռանեալը՝ թուրք թէ անոնց ապշած նայելու ատեն՝ քոլերնին ու նեցածին մոռնալը , և թերեւս գողցընելը կը յայտնէ : Այս յանցանքը յայտնի չափէր խաչառուր , բայց յետ արժանապէս գոլելու զքաղաքն և զքաղաքացիս , արդարութիւն համարի և ասոնց անիրաւ կամ անլայել քանի մի դործն ալ յիշել . և թերեւս ոչ որ մերազգի տեսողաց այս զարմանալի ցազաբը՝ ասոր նման արդարակատ չէ եղած . համարձակ կ'ըսէ յետ գոլասանութեանը .

« Այս հերիք է զոր գոլեցի . պահ մի քամբաս առնեմ զնոսա . . . .

Զայշելչութիւնն աղէկ ունին , բայց այս քանի բանս անարգ է » :

Այս անարգ բաներուն պիխաւոր համարի զգեստուց շռայլութիւնն և անպատճան բացուածքը , կանանց նազանքով քայլուածքը , արանց փաղաքութիւնը , մանր թռչուններ , ծովային և ցամանքային ժժմոննքներ ու միջատներ ուտելինին , շռները զրկել և զգուել և ինչուան մէկսեղ եկեղեցի ալ մոցըննելը , կերակրոյ ատեն իրենց բերնի պատառը անոնց տալը , եայն : — Խաչառուր կ'երեւի թէ ինչպէս սուր աչք՝ այսպէս ալ սուր յիշողաթիւն ունի եղեր , կամ տեսածը իր յիշառակաց զբուկին մէջ կը նշանէ եղեր . վասն զի վենետիկէ ելնելէն վերջը և դէպ ի Քորֆու կղզի նաւելու ատեն շտափով զբեր է «ի մէջ նեղութեան ծովուն , (երբ և) ջուր մեր պակասեալ կը » . այսպէս կը սկսի , վերջն ալ կը կրկնէ

» Այս հերիք է զոր գրեցի , աճզեցայ . ձեզ ի՞նչ գաղտնի .

Դովուն թասան զիս առեր . ամենեւին աշք չերեւի .

Ի բազում լիմանլրիւէ և ի կամու որ շատ լինի՝

Զիմածցըններ տակմա քամի . յօյս մեր այն է (որ) - Քորփէզ հասնի » :

Կ'երեւի թէ զրութեան վերջերը յօդնած , և ծովուն թասան այսինքն հոգն մէկ մի առանց յաջող հովու մեալն , մէկ մ'ալ ասասիկ հովով ալէկոծիլն՝ իր զուին ալ ժամեցրեր է . վասն զի հակառակ ի սկզբան ըսածներուն վենետիկ համար՝ թէ եմանը լիայ , և թէ « տեսնողն ամէն ապուշ մնայ » , վերջը վերջը կ'ըսէ . « Յորժամ զբաներս զրէի , և առ ընկերըս շխոսէի ,

Ծիծաղէի ես իմ վրայ՝ թէ վանատիկ ամքը երեւի .

Արփ' զնա՛ Ըսպանիոյ քաղաք՝ որ գեղորայքն է իրբե զվանասակի »

և կարգաւ յիշելով Անապոլի (Նաբոլի) , Այլկուռնա , Ֆլորենցա , Մեսսանա , Բալերմայ , Մարշլիա , Ճինիլիզ , դարձեալ կրկնէ « գեղն է նման վանա-

» տիկոյ» / թերեւս յիշելով վեհնետիկոյ նեղուց ըլլալը . իսկ միւս յիշեալ քառարաց միջի և զրսի բնագրածակութիւնը , իրեն ալ սրտնեղութեան ատեն պյապէս ըսել տուեր է : Բայց լաւ է որ գոհութեամբ կ'աւարտէ գրուածը .

« Փառք շինողին օրինողին , պակաս չըներ զնափաղանին .

Այս ականական բարով վայելեն , օրհնեն գտուողըն պարզեւաց» .

Եւ կրիմն փառատրութեամբ կը կնքէ . « Փառք Աստուծոյ յամենայն ժամ» :

Կըրնանք մենք ալ փառաբանակից ըլլալ առ Տուողն պարզեւաց , որ այն պիսի մութ և խուզ դարս մէջ (Ժ.Զ) ասանկ սուր թէ և անհարթ կամ անօգնական հանճարներ պարզեւեր է մեր իշաշտուրներուն , որ է բաել թէ մեր անծանօթ հանճարեղ ազգայնոց մէկ քանին յայտներ է , իրենց հայրենի երկրէն շատ հեռու և անկարծելի կողմեր : Կարծեմ այս վերոյիշեալ ներէն և անոնց ժամանակակից՝ շատ աելի հանճարեղ և հնարագէտ քան զլենետն , մեծագոյն տօրակ շինող և ծովուն յատակը քերող Հայ մ'ալ պիտի ճանշցուի , որ երեւի թէ նոյն իսկ իրեն բազմահնար յաջողութեան համար՝ հանրածանօթ ըլլալով այն ժամանակ , ի վեհնետիկ յատկաբար Հայն կոչուեր է , L'Armeno , ինչպէս յաճախ կը գրուի քաղքին Դիւտանաց մէջ :

## ԽՈՄՐՈՎԻԿ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ ԵՒ ՄԻԱԲԱՆԻ ԸՐԱԾ ՄԻ

### ՆՈՐ ԳԻՒԻՏԻ ԱՌԹԻՒ



« ՈԱՐԱԾ » ամսագիրը՝ ժամանակէ մ'ի վեր նորանոր ոյժեր ընդունելով իւր խմբագրութեան մէջ , արդէն ակսել է իւր նոր ուղղութեան հետ՝ օրէ ցօր կարեւորութիւն ևս ստանալ , մասնաւոր կերպով մեր սիրելի սահինեաց անյայս և կամ անտիպ մնացած երկասիրութեանց հաստուկտիր հաստածոց հրատարակութեամբք , զոր հետզհետէ հանելով զարաւոր փոշիներու մէջէն՝ կու տայ ՚ի վայելս ազգասէր ուսումնասիրաց : Այսպիսի հնդասիթ շարժման մ'ի գործունեայ վաստակաւորաց մէջ ծանօթ էր մեր՝ զեռ երկու տարի յառաջ Մ. Խորենացւոյ Պատմագրութեան վրայ հրատարակուած շահազրիո յօդուածներով՝ Միաբան մականուանեալ սրամիս ոմն , որուն ուսումնասիրութիւնքը մնացին և կը մնան գեռ առանց եղրակացութեան : Իսկ ներկայ տարին բացաւ նա Անանիա Նարեկացւոյ խոստովանուրեան Գրոյն և 158 հերձուածներու՝ նախնեացմէ մնացած թարգմանածոյ համառոտագրութեամբը , որոնք կրօնականէն զատ պատմական արժէք մ'ալ ունին : Իսկ այժմ , այսինքն է Ապրիլ ամսաթերթին մէջ , կու գայ զարձեալ ՚ի հան-